

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

----- 2019 թ. N ----- Ա

**ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ
ՄՈՒՇԵՂ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 457-Ն որոշմամբ հաստատված կարգի 6-րդ և 7-րդ կետերով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է.**

1. Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **Մուշեղ Մեսրոպի Ավետիսյանին** (ծնված՝ 2000 թվականի մայիսի 4-ին, հասցեն՝ ք. Երևան, Գ. Նժդեհի 27/2, բն. 53) շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տալ տարկետում մինչև 2021 թվականի ամառային զորակոչը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄՈՒՇԵՂ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Իրավական ակտի անհրաժեշտությունը

Մուշեղ Մեսրոպի Ավետիսյանը 2017 թվականին ավարտել է Ռուսաստանի Դաշնության Վորոնեժի պարարվեստի ուսումնարանի «Դասական պար» բաժինը ու ուսումնարանն ավարտելուց հետո հրավիրվել է աշխատելու Մոսկվայի պետական թատրոնի բալետային խմբում՝ որպես բալետի արտիստ, Վ. Մ. Գորդիևի ղեկավարությամբ:

2018 թվականին վերապատրաստվել է Կրեմլի թատրոնում Ա. Բ. Պետրովի գլխավորությամբ:

2019 թվականի նոյեմբերի 1-10-ը վերապատրաստվել է Մոսկվայի Մեծ թատրոնում:

2019 թվականի մարտին ընդունվել է Ա. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոն՝ որպես բալետի արտիստ:

Ունի հետևյալ ձեռքբերումները և նվաճումները միջազգային մրցույթներում՝

1) "Tanzolymp" բալետային միջազգային մրցույթ-փառատոն, Ֆինալիստ- դիպլոմակիր, Բեռլին, Գերմանիա, 2017 թ.,

2) Վախթանգ Չաբուկիանի 6-րդ բալետային միջազգային մրցույթ-փառատոն, 1-ին մրցանակ և դիպլոմ, Թբիլիսի, Վրաստան, 2019 թ.,

3) "Spoleto" միջազգային բալետային մրցույթ, Ֆինալիստ-դիպլոմակիր, Սպոլլետո, Իտալիա, 2019 թ.:

Նվաճումներ ունի նաև համառուսական մրցույթներում՝

1) "Юный исполнитель" համառուսական բալետային մրցույթ, 1-ին մրցանակ, ք. Վորոնեժ, ՌԴ, 2016 թ.

2) "Русский балет" համառուսական բալետային մրցույթ Մեծ թատրոնում, Ֆինալիստ-դիպլոմակիր, Մոսկվա, ՌԴ, 2017 թ.,

Իրավական ակտի ընդունումը թույլ կտա Մ. Ավետիսյանին կատարելագործել մասնագիտական հմտությունները և հանրահռչակել հայկական պարարվեստը միջազգային հարթակներում:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 457-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի համաձայն՝ 2019 թվականի մայիսի 13-ին ՀՀ մշակույթի նախարարությունում տեղի է ունեցել մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ եզրակացություն տվող հանձնաժողովի նիստ:

Նիստի օրակարգում քննարկվել է նաև Մ. Ավետիսյանի դիմումը, ներկայացված փաստաթղթերը և ծավալած գործունեությունը:

Հանձնաժողովը կայացրել է դրական եզրակացություն Մ. Ավետիսյանին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու վերաբերյալ:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության զորահավաքային նախապատրաստության բաժնի (մշակույթ) կողմից:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **Մուշեղ Ավետիսյանին** շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունմամբ հնարավորություն կտրվի Մ. Ավետիսյանին շարունակել ծավալած մշակութային գործունեությունը, էլ ավելի կատարելագործել ձեռք բերած մասնագիտական հմտությունները և ներկայացնել հայկական մշակույթն ու պարարվեստը Հայաստանում և արտերկրում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄՈՒՇԵՂ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **Մուշեղ Ավետիսյանին** շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

«ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՆՇԱՆԱԿԱԼԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐ ՈՒՆԵՑՈՂ ՄՈՒՇԵՂ ԱՎԵՏԻՍՅԱՆԻՆ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **Մուշեղ Ավետիսյանին** շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման ընդունումը Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում եկամուտների նվազեցում կամ ծախսերի ավելացում չի առաջացնում:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող Մուշեղ Ավետիսյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ ներկայացված դիտողությունների և առաջարկությունների

h/h	Առաջարկության հեղինակը, գրության ամսաթիվը, գրության համարը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
1.	ՀՀ պաշտպանության նախարարության 21.05.2019 թ. N ՊՆ/510/600-2019 գրություն	«Մշակույթի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող Մուշեղ Ավետիսյանին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2019 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առարկություններ չունեն:	Ընդունվել է ի գիտություն:	
2.	Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք (www.e-draft.am)	Դիտողություններ և առաջարկություններ չեն եղել:	Ընդունվել է ի գիտություն:	